

խանաց մասին՝ ինչ որ Կոստանդնուպոլսի հայրապետը կ'ըսէր իւրայնոց համար: «Ի սեղանոյն յառնիցեն յանդգնեալք զայրագնեալք ծաղրալից խայտառակեալք, եւ ի ծառայիցն անգամ քամահեալք: Ստրուկքն լուրջ ի գինւոյ՝ թողուցուն եւ գնայցեն, եւ նոքա արբեալք եւ զեղխեալք՝ մնայցեն: Անդ կայցեն ամօթ, անարգանք եւ վատթարութիւն» (Ոսկ. թղթ. Ա, 534): Այս նկարագիրը կ'ամբողջացնէ Մանդակունւոյն աշխոյժ զրիչը, ցոյց տալով հայ արբեցողին ներքին տագնապը՝ «նողկալովն եւ շմալովն եւ որովայնին փքալովն», եւ այս վիճակին արտաքին երեւոյթներն ալ: «Թառանչէ, կ'ըսէ, յորովայնին ծանրութենէ, եւ ժահահոտ զգայուլքն նեխութեանն զմերձաւորսն զազրացուցանէ: Եւ ի կարկառակոյտ աղբոյն յաճախութենէ զառ ի վեր փսխածք ելանեն, եւ զառ ի վայր խոխոջանք արձակին¹. եւ շոգին աղտեալ ընդ երեսն մտանէ եւ ընդ օդսն տարածանի» (127):

Այս նսեմ տեսարանը կը սրէ հայ եւ օտար մատենագրաց ցասումն ու լեզուն, եւ հայ բարբառը կը բանայ անոնց իւր

1. Հմմտ. Ոսկ. Մտթ. Բ, 70. «Ամաչեմ ասել զչաւրաչար գայութիւնս, զառ ի վեր փսխածսն, զառ ի վայր խոխոջանսն»: